02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

48 (1397) • 14 դեկտեմբերի 2018 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

— Ոտնձգություն օրենքի դեմ —

Յուրացնելու համար պատիժ նախատեսում է քրեական օրենսգրքի 179 հոդվածը: Սեփականության դեմ ուղղված այս հանցարարքի պատիժը սահմանվում է ըստ կատարման չափերի, եղանակի, պարբերականության:

Յուրացնողները հիմնականում որոշակի լիազորություններով օժտված անձինք են, որոնք ոչ միայն հանցավոր արարքը կոծկելու, այլեւ դրա իբր օրինական լինելու տպավորություն ստեղծելու հնարավորություն ունեն: Հանգամանք, որ դժվարացնում է հանցագործության բացահայտումը:

Քրեական օրենսգրքի 179 հոդվածն էին «ընտրել» մեր հրապարակման «հերոսները», որոնց կներկայացնենք պայմանական անուն-ազգանունով: Վերջին խոսքը, բնականաբար, դատարանինն է, որտեղ էլ կորոշվի յուրաքանչյուրի մեղավորության աստիճանն ու պատիժը: Պարզապես համառոտ ներկայացնենք վերջին երկու ամիսներին բացահայտված մի քանի դեպքերի նկարագրական մասը՝ համոզված, որ դա որոշակի կանխարգելիչ նշանակություն կունենա բոլոր նրանց համար, ովքեր կցանկանան «օգտագործել» պաշտոնական լիազորությունները:

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի նախկին ղեկավարը պաշտոնավարման տարիներին կատարել է չարաշահումներ:

Տեղեկությունների հիման վրա Տավուշի մարզի ոստիկանների հետ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ 2016 թվականին համայնքի ղեկավարը, չարաշահելով պաշտոնեական դիրքը, համայնքի հաշվեկշռում գտնվող մոտ 2000 մետր ընդհանուր երկարությամբ տարբեր տրամաչափերի խողովակները տեղափոխել էր իր փայտամշակման արտադրամաս եւ ձկնաբուծարան՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ մոտ 4.000.000 դրամի նյութական վնաս:

էջ 3

Կասկածյալը հայտնաբերվել է

Դեկտեմբերի 10-ին ոստիկանության Արտաշատի բաժնում հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ կեսի ծակած-կտրած վերքով բուժօգնության է տեղափոխվել 23-ամյա մի քաղաքացի:

Հիվանդանոց մեկնած ոստիկանության ծառայողները պարզել են, որ տուժածը տեղափոխվել էր Ազատավան գյուղի Աբովյան փողոցում գտնվող մթերային խանութի դիմացից: Հաջողվեց պարզել նաեւ տաքսու վարորդի ինքնությունը, որն իր մեքենայով երիտասարդին հիվանդանոց էր հասցրել:

Կատարվածի հանգամանքները պարզելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 11-ին ոստիկանության Արտաշատի բաժնի ՔՀԲ ծառայողները, մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով, բերման են ենթարկել Երեւանում բնակվող 22-ամյա Աստղիկ Ե.-ին:

Կատարվում է նախաքննություն:

Ավազակային հարձակում ծաղկի խանութում

Նոյեմբերի 30-ին Ամիրյան փողոցի ծաղկի խանութներից մեկում ավազակային հարձակում էր կատարվել: Շուրջօրյա գործող ծաղկի խանութ, լույսը չբացված, մի տղամարդ էր մտել, ապա համոզվելով, որ վաճառողուհին մենակ է, դանակի սպառնալիքով հափշտակել էր դրամարկղի ողջ գումարը, բջջային ու քաղաքային հեռախոսներ եւ դիմել փախուստի:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Կենտրոնական բաժնում տեղեկացան օպերատիվ կառավարման կենտրոնից: Վաճառողուհին սրահի տիրոջն էր զանգել, սրահի տերն էլ՝ ոստիկանություն:

«Միջահասակ էր, 40-ից 45 տարեկան, նիհար կազմվածքով, ռուսերեն էր խոսում, բայց ռուսի նման չէր»,- ոստիկաններին հայտնեց վաճառողուհին:

Քրեական հետախույզները անհետաձգելի որոնողական աշխատանքներ ձեռնարկեցին: Ուսումնասիրվեցին ծաղկի խանութի ու հարակից օբյեկտների տեսախցիկների տեսագրությունները: Տեսահսկող սարքերը ֆիքսել էին կասկածյալին: Նա էր, ում նկարագրել էր տուժողը:

Տեսագրությունների վերծանումից քրեական հետախույզները մոտավոր պատկերացում կազմեցին կասկածյալի արտաքին նկարագրի վերաբերյալ: Հետագայում ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողների հետ համագործակցության արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ ավազակային հարձակումը հնարավոր է կատարած լինի Լենինգրադյան փողոցի բնակիչ Ժիրայր Գեւորգյանը: Նա Լենինգրադյան փողոցում հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց:

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Դանակահարողը հայտնաբերվեց

Դեկտեմբերի 3-ին Կենտրոն վարչական տարածքում դանակահարություն էր կատարվել: Արամի փողոցից դեպի մանկական երկաթուղի տանող ճանապարհին՝ թունելում, ընկերընկերուհիներ, թե ծանոթներ՝ հանդիպել էին, նախկինում ծագած հարցերի շուրջ վիճել, իսկ թե վեճն ինչով էր ավարտվել, ոստիկանության Կենտրոնական բաժնում տեղեկացան «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից: Հերթապահ բուժքույրը հայտնում էր, որ կրծքավանդակի ծակած վերքով մի երիտասարդի են բուժօգնության ընդունել:

Հիվանդանոց մեկնած ոստիկանները դեպքի վայրն ու ինչ-ինչ հանգամանքներ պարզելուց հետո Արամի փողոց մեկնեցին: Կասկածյալի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկվեցին օրենքով սահմանված բոլոր միջոցառումները՝ դեպքի վայրի զննությունից մինչեւ օպերատիվ հարցումներ: Դանակահարությունը ժամեր անց բացահայտվեց:

Հիվանդանոցում տուժողի եւ նրա մտերիմների հետ զրույցից պարզվել էր, որ երիտասարդին դանակահարել է Փոսո մականունով մի աղջիկ: Հետագա միջոցառումներով քրեական հետախույզները պարզեցին նաեւ, որ Փոսոն Ջրվեժի Բանավան թաղամասի բնակչուհի Արմինե Հարությունյանն է: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին:

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստով հարուցվել է քրեական գործ:

Կրակոցներ Երեւանում

Դեկտեմբերի 4-ին ոստիկանության էրեբունու բաժնում հնչեց հիվանդանոցային երկու ահազանգ: Ժամը 22-ի սահմաններում «Էրեբունի» բժշկական կենտրոնից հայտնեցին, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխվել 35-ամյա մի տղամարդ: Որպեներ անց «Նաիրի» բժշկական կենտրոնից հայտնեցին, որ հրազենային վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել 27 եւ 44-ամյա անձինք:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվեց, որ հիվանդանոց տեղափոխված անձինք վնասվածքները ստացել էին մայրաքաղաքի Աճեմյան փողոցում գործող հաստատությունում՝ վիճաբանության ժամանակ:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին արնանման հետքեր, ատրճանակի փամփշտատուփ՝ 9 մմ տրամաչափի 2 փամփուշտով եւ այլն:

Իրավապահները պարզել են վիճաբանության մասնակիցների, այդ թվում՝ ապօրինի հրազենով կրակողի ինքնությունը: Նրան, ինչպես եւ հանցագործության գործիքները հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկվում են միջոցառումներ:

Համազգեստ չհարգողը

2017 թ. նոյեմբերի 28-ին Գարիկ Դալլաքյանը Ալավերդի քաղաքի մի խումբ բնակիչների, այդ թվում՝ գործով տուժողներ Հայկ Ս.-ի ու Արմեն Մ.-ի հետ Սանահին թաղամասում գտնվող ավտոտնակներից մեկում հաց է կերել, տնական օղի խմել:

Ժամը 23-ի սահմաններում ներկաներից սպա Վարդան Գ.-ի՝ զինվորական համազգեստ կրելու կապակցությամբ Գարիկ Դալլաքյանը, ըստ մեղադրանքի, վիրավորական արտահայտություններ է արել, ինչի պատճառով վեճի մեջ է մտել Հայկ Ս.-ի հետ: Դուրս են եկել ավտոտնակից՝ խոսակցությունը դրսում շարունակելու: Վեճի ընթացքում Գարիկ Դալլաքյանը դանակով հարվածներ է հասցրել Հայկին: Հայկ Ս.-ն մահացել է:

էջ 6

Անխոհեմության փակուղի

Գոռգոռացին, հայհոյեցին, խփեցին իրար՝ մոռանալով բաժակաճառերն ու ընկերության մասին ժամեր առաջվա հավաստիացումները:

էջ 2

Պատանեկան սադիզմ

Մարդիկ վախենում են խուլիգանների, փողոցներում թրեւ եկող անչափահասների հարձակման զոհ դառնալու հեռանկարից:

էջ 4

Ձախողված գողություն

Դանդամիջյան ճանապարհին մեքենայի անիվները թաղվել էին ցեխի մեջ, եւ ձախողակ գողը ստիպված փախել էր:

էջ 7

Անչափահասների խնդիրներով մտահոգ

Դեկտեմբերի 11-ին տեղի ունեցավ մուրացիկ եւ թափառաշրջիկ երեխաների հայտնաբերման, նրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստը: Մասնակցում էին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, «Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնի», պետական տարբեր շահագրգիռ կառույցների, այդ թվում՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի եւ առողջապահության նախարարությունների ներկայացուցիչներ, ոստիկանության անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների պետեր:

Ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանը ներկայացրեց 2018 թ. անցած ժամանակահատվածում մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահասների ու նրանց ընտանիքների հետ տարված աշխատանքները: Նշեց, որ չնայած ծավալած աշխատանքներին՝ խնդիրը պահանջում է բոլոր շահագրգիռ կառույցների ջանքերը, որպեսզի նվազի մուրացկանությամբ եւ թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների թիվը:

Ներկայացվեցին նման երեխաների հայտնաբերման, դրա հետ կապված խնդիրների լուծման եւ միասնական աշխատանքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, քննարկվեցին անչափահասների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու, տեղական ինքնակառավարման մարմիններում գործող խնամակալության եւ հոգաբարձության մարմինների հետ համագործակցությանը վերաբերող հարցեր:

Քննարկումների արդյունքում կարեւորվեց առկա խնդիրների ուղղությամբ համատեղ աշխատանքների իրականացումը:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«Ալիանս Ֆրանսեզում» հավաստագրեր՝ ոստիկաններին

Ծառլ Ազնավուրի երաժշտության ներքո սկսվեց Ալիանս Ֆրանսեզում կազմակերպված ցերեկույթը: Նախքան ֆրանկոֆոն երկրների գագաթնաժողովի միջոցառումները՝ հասարակական կարգի պահպանությանը ներգրավված ոստիկանության ծառայողները այստեղ ֆրանսերեն էին սովորել:

Դեկտեմբերի 8-ին ոստիկաններին հանձնվեցին հավաստագրեր: Կենտրոնի տնօրեն Սյուզան Ղարամյանը փաստեց, որ իրենց աշխատանքն ապարդյուն չի եղել. դասընթացների շնորհիվ Ֆրանկոֆոն ավանում ծառայություն իրականացրած ոստիկանները կարողացան հաղորդակցվել եւ անհրաժեշտ տեղեկություններ փոխանցել մեր երկրի ֆրանսախոս հյուրերին:

Ալիանս ֆրանսեզի տնօրենը մասնակիցներին ներկայացրեց նաեւ Հայաստանի ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օտար լեզուների ամբիոնի պետի ձեռքբերումները:

Ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիան իր 50-ամյակի կապակցությամբ վաղօրոք ֆրանսերենի դասը ներկայացնող լուսանկարների մրցույթ էր հայտարարել՝ «Ֆրանսերեն սովորելը նաեւ հաճելի է» խորագրով: Աշխարհի մասշտաբով անցկացված մրցույթում ոստիկանության գնդապետ Անի Հայրապետյանի ուղարկած լուսանկարները 12 լավագույնների թվում են եւ կզարդարեն Ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիայի 50-ամյակին նվիրված հոբելյանական օրացույցը:

Ցերմ մթնոլորտում անցած ցերեկույթը եզրափակվեց՝ ինչպես սկսվել էր՝ Ծառլ Ազնավուրի ջերմացնող երգերով...

Մարտուն ՍԻՄՈՆԱՅԱՆ

Անխոհեմության փակուղի

Օրեր կան, երբ ոստիկանության բաժիններում առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու տաս-տասնհինգ ահազանգ է գրանցվում, որոնց հիմնական մասը՝ ինչ-որ անհեթեթ վիճաբանությունների հետեւանքով: Ինչ խոսք, առտնին հարաբերություններում տարակարծությունները գուցեեւ օրինաչափ են, անօրինականն այն է, երբ տարակարծությունը մարդկանց հասցնում է քրեական օրենսգրքի տիրույթներ:

Մայրաքաղաքի Նոր Նորք թաղամասի բնակչուհիներից մեկը ծննդյան տարեդարձը որոշեց նշել ընկերների հետ՝ բնության գրկում:

Խնջույքն ավարտվեց ուշ երեկոյան: Օրվա տպավորության տակ էին՝ ջերմ, մտերիմ, պատրաստակամ: Բայց խմիչքն, ի վերջո, իր խոսքն ասելու էր՝ դառնալով իրադրության տերը:

Հոբելյարի՝ սուրճ խմելու առաջարկությունը չմերժեցին ու բարձրացան նրա բնակարան: Հետո ծայր առած զրույցի ընթացքում մեկը հայհոյեց, մյուսն իրեն վերագրեց, երրորդն էլ դիտողություն արեց... Մի խոսքով, վեճի «թեմա բացվեց», որի շարունակությունը դրսում էր լինելու:

Մտան շենքի բակի տաղավարն ու սկսեցին «հաշիվ պահանջել» իրարից: Խմիչքն «իրենն ասել էր»...

Գոռգոռացին, հայհոյեցին, խփեցին իրար՝ մոռանալով բաժակաճառերն ու ընկերության մասին ժամեր առաջվա հավաստիացումները: Իսկ հետո ամենաանխոհեմը՝ Վասակ Վարդանյանը, հանեց դանակն ու հարվածեց առաջին պատահածի որովայնին...

Վիրավորին նախ բարձրացրին հոբելյարի տուն, հետո հասկանալով, որ բժշկի օգնության կարիք կա, զանգեցին «շտապօգնություն»:

Ահազանգը ոստիկանության Նոր Նորքի բաժին հիվանդանոցից էր, այնինչ մինչ դանակահարությունը տասնհինգ-քսան րոպե քաշքշոց, ծեծկռտուք էր եղել շենքի բակում, ու բնակիչներից ոչ մեկի մտքով չէր անցել միջամտել, ահազանգել ոստիկանություն:

Տուժողին պատճառված վնասվածքը ծանր որակվեց, իսկ Վասակ Վարդանյանին առաջադրված մեղադրանքը՝ քրեական օրենսգրքի 112 հոդվածի հատկանիշներով:

Փաստով կատարվում է նախաքննություն:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գրպանահատությունները բացահայտվեցին

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները ամենօրյա հետեւողական միջոցառումներով բավական օպերատիվ բացահայտում են գրպանահատության դեպքերը, որոնց մասին պարբերաբար տեղեկացնում ենք: Անդրադառնանք եւս երկուսին:

Ստացված տեղեկությունների համաձայն՝ Երեւանի բնակիչ Ռոբերտ Վարդանյանը մայրաքաղաքի Աբովյան-Իսահակյան փողոցների խաչմերուկում 18-ամյա մի աղջկա գրպանից բջջային հեռախոս է գողացել:

58-ամյա Ռոբերտ Վարդանյանին գրպանահատության դեմ պայքարող քրեական հետախույզները դեպքից մեկ ժամ անց հայտնաբերեցին Աբովյան փողոցում ու բերման ենթարկեցին ոստիկանության Կենտրոնական բաժին: Ոստիկանության օպերատիվ աշխատանքի արդյունքում՝ հեռախոսը չէր իրացվել ու հայտնաբերվեց անձնական խուզարկությամբ:

Դեկտեմբերի 2-ին ոստիկանություն դիմած 22-ամյա աղջիկը հայտնեց, որ երթուղայինում գողացել են բջջային հեռախոսը: Գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները օպերատիվ պարզեցին գողությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը եւ օպերատիվ էլ նրան հայտնաբերեցին: Խոսքը Երեւանի բնակիչ, 20-ամյա Խաչիկ Սարգսյանի մասին է, որը բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին: Այս դեպքում եւս գողոնը հայտնաբերվել եւ առգրավվել է:

Հորդորում ենք մեր համաքաղաքացիներին՝ հասարակական վայրում, հատկապես՝ երթուղայիններում ուշադրության կենտրոնում պահեք անձնական իրերը, իսկ դրանց կորստի կամ գողության դեպքում անմիջապես զանգահարեք ոստիկանություն:

Մ. Ս.

www.police.am

Դանակահարել էր չորս քաղաքացու

Դեկտեմբերի 9-ին ոստիկանության Նաիրիի բաժնում հաղորդում ստացվեց, որ Նոր Գեղի գյուղի խաչմերուկում հավաքված մարդիկ վիճաբանում են:

Մեկնած ոստիկանության Նաիրիի բաժնի օպերատիվ խումբը պարզեց, որ վիճաբանության ժամանակ նաեւ ծեծկռտուք է եղել:

Դեկտեմբերի 10-ին, ժամը 00.50-ին, «Աբովյան» բժշկական կենտրոնից ոստիկանություն հաղորդում ստացվեց, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության են տեղափոխվել երեք տղամարդ:

Նույն օրը, ժամը 1.10-ին, ոստիկանության Նոր Նորքի բաժնից հեռախոսագիր ստացվեց, որ կրծքավանդակի ծակած-կտրած վերքերով հիվանդանոց է դիմել մի տղամարդ: Նա հայտնել էր, որ վնասվածքը ստացել է Նոր Գեղի գյուղում անհայտ անձից դանակով հարված ստանալու հետեւանքով:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ դեկտեմբերի 9-ին, ժամը 21-ի սահմաններում, Նոր Գեղի գյուղի խաչմերուկում տեղի է ունեցել վիճաբանություն, որի ժամանակ Գեւորգ Բ.-ն դանակով հարվածել է տղամարդկանց:

Ձեռնարկված միջոցառումների եւ բացատրական աշխատանքների շնորհիվ Գեւորգ Բ.-ն ներկայացավ ոստիկանության Նաիրիի բաժին եւ խոստովանեց՝ ինքն է դանակով մարմնական վնասվածքներ հասցրել տղամարդկանց:

Կատարվում է քննություն:

Ոստիկանները բացահայտեցին կողոպուտը

Դեկտեմբերի 3-ին ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները Անդրանիկի փողոցից բերման ենթարկեցին 42-ամյա Գրիգոր Թորոսյանին, որը կասկածվում էր կողոպուտ կատարելու մեջ:

Կողոպուտի մասին հայտնել էր նոյեմբերի 29-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգած կինը: Նա հաղորդում էր տվել, որ անհայտ անձն իր ձեռքից հափշտակել է դրամապանակը ու փախուստի դիմել: Դրամապանակում եղել էր դրամ, դոլար, նույնականացման քարտ եւ բջջային հեռախոս: Պատճառված վնասի չափը գերազանցում էր 140 հազար դրամը:

Ձեռնարկվեցին հետախուզական միջոցառումներ՝ կողոպուտը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ: Վերծանվեցին դեպքի վայրի շրջակայքի տեսանկարահանող սարքերի տեսագրությունները: Դրանցից մեկում երեւում էին ե՛ւ Թորոսյանը, ե՛ւ տուժողը:

Գրիգոր Թորոսյանը խոստովանական բացատրություն է տվել:

Քննությունը շարունակվում է:

Խանութից գողություն կատարողը հայտնաբերվեց

Դեկտեմբերի 10-ին ոստիկանության Կենտրոնական բաժին հաղորդում ստացվեց, որ Աբովյան փողոցի խանութներից մեկը թալանում են:

Դեպքի վայր մեկնած ոստիկանության օպերատիվ խումբը պարզեց, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ խանութի մուտքի դռան փականը կոտրելու միջոցով ներխուժել են խանութ եւ գողացել հագուստ, կոշիկ, ժամացույցներ:

Հաղորդումից մեկ ժամ անց ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 1-ին գումարտակի ծառայողները Բայրոնի փողոցից, գողությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին 20-ամյա Թաթուլ Մ.-ին:

Կատարվում է քննություն:

Օպերատիվ

Ոտնձգություն օրենքի դեմ

Սկիզբը՝ էջ 1

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական հանցագործությունների հակազդման վարչության, Լոռու մարզային վարչության եւ Թումանյանի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենը թույլ է տվել չարաշահումներ եւ ապօրինություններ: Մասնավորապես, քոլեջի համար նախատեսված շինանյութն օգտագործել է իր եւ փոխտնօրենի բնակարանները վերանորոգելու համար, նաեւ վաճառել է քոլեջին պատկանող հաստոցները եւ գումարը յուրացրել է:

Յուրացման մասին հաջորդ հաղորդումը ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստացվել է ոստիկանության Շիրակի մարզային վարչությունից:

Համատեղ ձեռնարկած միջոցառումներով պարզվել է, որ Գյումրիի արհեստագործական ուսումնարաններից մեկի տնօրենը թույլ է տվել մի շարք չարաշահումներ: Մասնավորապես, 2013 թվականից մինչեւ 2015 թվականը ուսումնարանի ութ սովորողներ դասի չեն հաճախել, բայց ստացել են ավարտական դիպլոմ, իսկ նրանց կրթաթոշակը տնօրենը յուրացրել է: Պարզվել է նաեւ, որ 2012-ից մինչեւ 2015 թվականը ուսումնարանի տասնհինգ ուսանողներ, չմասնակցելով քննություն-



ների, գնահատվել են եւ ստացել ավարտական վկայական, իսկ ինը ուսանողների շուրջ մեկ միլիոն 250 հազար դրամ կրթաթոշակը տնօրենը յուրացրել է:

Նախնական տվյալներով՝ տնօրենն ու հաշվապահը յուրացրել են նաեւ գործուղումների եւ պարգեւատրումների գումարը:

Յուրացման ներկայացվող դեպքի մասին օպերատիվ տեղեկությունը ստացվել էր ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում: Ըստ այդմ՝ ոստիկանության ՊՊԳՎ Դիլիջանի պահպանության բաժնում կատարվել են ֆինանսական չարաշահումներ եւ յուրացումներ: Դանգամանքները պարզելու նպատակով նշանակվել է ծառայողական քննություն, որի ընթացքում իրականացված ստուգումներով պարզվել է, որ Դիլիջանի պահպանության բաժնի հաշվապահը բաժնի վեց աշխատակցի եւ իրեն, առանց իրավական հիմքի, վճարել է ընդհանուրը 21 միլիոն 567 հազար դրամ:

Ծառայողական քննության նյութերն ուղարկվել են գլխավոր դատախազություն:

Արմավիրի մարզի գյուղերից մեկի մանկապարտեզի նորոգման եւ խմբակային սենյակների կառուցման աշխատանքների իրականացման մրցույթը շահել էր սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերություն: Քսան միլիոն դրամ արժողության աշխատանքներն անորակ կատարելու, շինարարական վատորակ նյութեր օգտագործելու միջոցով ՍՊԸ տնօրենը երեք միլիոն դրամ էր յուրացրել: Յուրացնելու փաստը չի ընդունում:

Ինչ խոսք, յուրաքանչյուր ոք իրավունք ունի չընդունելու առաջադրված մեղադրանքը: Մինչդեռ իրավապահ մարմինների գործառույթն այն է, որ յուրաքանչյուր հանցագործություն բացահայտվի, յուրաքանչյուր ոտնձգություն ստանա արժանի պատիժ:

Յուրացնելու եւ վատնելու բոլոր դեպքերով քննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բացահայտում են Քանաքեռ-Զեյթունի ոստիկանները

Նոյեմբերի 29-ին 1-02 ահազանգած տղամարդը հայտնում էր, որ բացել են տան պատուհանը, մտել ներս ու փող գողացել: Ահազանգը տարածքային ենթակայությամբ փոխանցվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Օպերատիվ խումբը դեպքի վայր՝ Ահարոնյան փողոց մեկնեց՝ կատարվածի հանգամանքները պարզելու:

Դեկտեմբերի 3-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին բնակարանային գողության վերաբերյալ եւս մեկ ահազանգ փոխանցվեց: Դեպքի վայր՝ Կամարակի փողոց մեկնած օպերատիվ խումբն արձանագրեց՝ պատուհանը բացել ու տուն են մտել, սակայն ոչինչ չգողանալով՝ հեռացել են:

Բնակարանային գողության մեկ ահազանգ էլ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում հնչեց դեկտեմբերի 4-ին: Դեպքի վայր՝ Վահյան փողոց մեկնած օպերատիվ խմբին հայտնի դարձավ, որ տուն են

մտել դարձյալ պատուհանը բացելով: Այս դեպքում գողոնը տարբեր իրերով պայուսակ էր:

Ոստիկանները տարածքում որոնողական աշխատանքներ իրականացրին, որոնց ընթացքում դեպքի վայրից քիչ հեռու հայտնաբերվեցին կնոջ իրերը:

Բնակարանային գողությունները օպերատիվ բացահայտելու նպատակով մշակվեց միջոցառումների ծրագիր, որի իրականացմանը, բացի քրեական հետախույզներից, ներգրավվեցին նաեւ համայնքային ոստիկանները: Համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նրանք տեղեկություններ ստացան, որ բնակարանային գողությունները կատարել է Հարություն Հակոբյանը: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին, այնուհետեւ ներկայացվեց տարածքային նախաքննական մարմին, որտեղ տվեց խոստովանական ցուցմունք: Նախկինում ութ անգամ դատապարտված Հարություն Հակոբյանը կալանավորվել է:

Կատարվում է քննություն:

Մ. Ս.

Իջեւանյան հանցադրվագ

Հոկտեմբերի 31-ին ոստիկանություն զանգած քաղաքացուհին հայտնեց, որ ժամը 9-ից 15-ն ընկած ժամանակահատվածում ինչոր մեկը մտել է Իջեւան քաղաքի Տերյան փողոցի իր տուն եւ գողացել պլազմային հեռուստացույց, որդու որսորդական հրացանն ու այլ իրեր:

Դեպքի վայր մեկնած ոստիկանության Իջեւանի բաժնի օպերատիվ խումբը արձանագրեց, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ կոտրել էին երկաթյա ճաղավանդակը, բացել լուսամուտն ու մտել ներս: Մատնահետքեր չկային. գործել էին ձեռնոցներով:

Ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու քննչական գործողությունների շնորհիվ կասկածներ առաջացան, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Իջեւանցի Մարտուն Սահակյանը: Նա դեկտեմբերի 2-ին հայտնաբերվեց եւ, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Իջեւանի բաժին:

Քննչական փորձարարության ընթացքում գողոնն ամբողջությամբ հայտնաբերվել ու առգրավվել է:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ գողության ու զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր եւ սարքեր հափշտակելու կամ շորթելու հատկանիշներով:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Փոքրիկը տեղափոխվեց Հայաստան

Դեկտեմբերի 11-ին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության ծառայողները Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան վերադարձրին երեք ամսական երեխայի: Ռուսաստանի Դաշնությունում փոքրիկ Անիի անխնամ մնալու մասին գրությունը արտաքին գործերի նախարարությունից ոստիկանություն ստացվել էր հոկտեմբերի 27-ին: Ըստ այդմ՝ Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքի Դերժինսկի շրջանի ղեկավարը դիմել էր Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն առանց ծնողական խնամքի մնացած հայազգի անչափահաս երեխային Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու խնդրանքով:

Գրության ուսումնասիրությամբ պարզվեց, որ երեխայի մայրը Նովոսիբիրսկ քաղաքի Դերժինսկի շրջանի ծննդատանը դիմում-հրաժարական էր ներկայացրել երեխայից եւ նրա նկատմամբ ծնողական իրավունքներից հրաժարվելու եւ որդեգրման համաձայնություն տալու մասին, ինչից հետո երեխային թողնելով ծննդատանը՝ հեռացել էր:

Նկատի ունենալով, որ երեխան հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, միաժամանակ հաշվի առնելով ԱՊՀ անդամ երկների միջեւ անչափահասներին իրենց մշտական բնակության երկրների վերադարձնելու համաձայնագրի պահանջները, քրեական հետախուզության աշխատակիցների ուղեկցությամբ երեխան տեղափոխվեց Հայաստան:

Հ. Պ.

Թանկարժեք կոնյակի սիրահարը

Ոստիկանության Էրեբունու բաժին սուպերմարկետներից թանկարժեք կոնյակների գողության վերաբերյալ ահազանգեր էին ստացվում: Ինքնությունը չպարզված մի տղամարդ մտնում էր սուպերմարկետներ եւ հարմար առիթն օգտագործելով՝ գողություն կատարում:

Ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները տեսագրությունների ուսումնասիրության, ինչպես եւ ոստիկանության այլ ստորաբաժանումների գործընկերներին կողմնորոշումներ ուղարկելու արդյունքում՝ պարզեցին տեսագրությունում երեւացող անձի ինքնությունը: Կապանում հաշվառված Ռուդիկ Բաբայանն էր, որին հայտնաբերեցին մայրաքաղաքի Տիգրան Մեծի պողոտայում ու գողության կասկածանքով բերման ենթարկեցին բաժին՝:

55-ամյա Ռուդիկ Բաբայանն իրավապահներին հայտնել է, որ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին սուպերմարկետներից գողացել է տարբեր տեսակի 17 շիշ թանկարժեք խմիչք:

Կատարվում է քննություն:

«Հնդկական» կողոպուտ

Ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի քրեական հետախույզները տեղեկություններ էին ձեռք բերել, որ նոյեմբերի 26-ի գիշերը Այգեստանի 11-րդ փողոցի տներից մեկում վեճ եւ կողոպուտ էր եղել: Ավելի կոնկրետ՝ Հնդկաստանի քաղաքացի Հարպրիդ Սինհը հնդիկ չորս ընկերների հետ մտել էր նշված տունը, որտեղ ազգությամբ հնդիկ երկու երիտասարդների հետ գումարային հարցերի շուրջ պարզաբանումների ժամանակ 18-ամյա Սինհը վերցրել էր մյուս կողմին պատկանող երեք բջջային հեռախոս, դյուրակիր համակարգիչը՝ պայուսակով, որի մեջ Հնդկաստանի քաղաքացիների անձնագրեր էին: Վերցրածը վերադարձնելու դիմաց էլ փող էր պահանջել՝ 1200 դոլար:

Ոստիկանները Հարպրիդ Սինհին, ընկերոջ հետ, բերման ենթարկեցին Մարաշի բաժանմունք: Խուզարկությամբ հայտնաբերվեց հափշտակված հեռախոսներից մեկը:

Բացատրական աշխատանքի արդյունքում ոստիկանություն ներկայացան նաեւ միջադեպին մասնակից մյուս անձինք: 27-ամյա Գալպիար Սինգհը ներկայացրեց վերցված պայուսակը՝ դյուրակիր համակարգչով եւ Հնդկաստանի քաղաքացիների անձնագրերով հանդերձ:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

«Երեւանյան խրոնիկա»

Վարդենիսցի Սարգիս Խաչատրյանը չէր աշխատում. երազում էր մայրաքաղաքում բոհեմական կյանքի մասին: Իսկ թե երբ մայրաքաղաքում ուզածի չափ կզվարճանար՝ կապված էր ֆինանսի հետ: Մտատանջությունները երկար չտեւեցին: Թերթի կրպակներից մեկում, օգտվելով աշխատակցուհու բացակայությունից, գողացավ սեղանին դրված 50 հազար դրամը: Ուղեւորվեց Երեւան՝ երազանքն իրագործելու: Վարդենիս վերադարձավ, երբ փողը վերջացավ:

Մայրաքաղաքում զվարճանալու ծգտումը մեծ էր, ուստի որոշեց կրկին գողանալ: Մտավ մթերային խանութներից մեկը: Վաճառողուհին զբաղված էր ապրանքները դասավորելով: Օգտվելով առիթից՝ բացեց դրամարկղի դարակը եւ 40 հազար դրամով հանդերձ հեռացավ: Այս անգամ էլ փողը ծախսեց Երեւանում եւ դատարկ գրպանով վերադարձավ Վարդենիս:

Երեւանյան օրերի հույսով քայլում էր Վարդենիսի փողոցներով, երբ որոշեց բախտը փորձել հագուստի խանութում: Այս անգամ էլ հաջողեց, քանզի վաճառողուհին դրսում էր: 43 հազար դրամը գողացավ ու շտապեց Երեւան: Կյանքն «ուրախ» էր անցնում՝ ոգելից, աղջիկներ, պար, երաժշտություն:

Օրեր անց կրկին մայրաքաղաքում զվարճանքների մեջ էր՝ այս անգամ Վարդենիսի մթերային խանութներից մեկից գողացած 15 հազար դրամով:

Վարդենիսում արդեն անհարմարավետ էր զգում, ուստի հերթական գողության ու Երեւան գնալու մասին էր մտմտում: Հոկտեմբերի 13-ին, իբր գնումներ կատարելու նպատակով, մտավ մթերային խանութ: Վաճառողուհին պահեստում էր: Դրամարկղից գողացավ 55 հազար դրամ, իսկ ժամեր անց արդեն Երեւանում էր...

Հերթական գողության «աշխարհագրությունը» փոխեց: Մեծ Մասրիկ գյուղի մթերային խանութից գողացավ 250 հազար դրամ, որը մսխեց «երեւանյան օրերի խրոնիկայում»:

Հոկտեմբերի 19-ի կատարած գողությունը, սակայն, եղավ վերջինը: Նույն թերթի կրպակից, որտեղից առաջին անգամ գողություն էր արել, 50 հազար դրամ գողացավ: Բայց «ճակատագրական» գողություն էր...

Ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, գողություն կատարելու կասկածանքով, Սարգիս Խաչատրյանին բերման ենթարկեցին:

Կատարվում է քննություն:

Զվարճալի ամփոփագիր

Համացանցային թակարդ

27-ամյա «պատանյակ» Կառլենը հաղորդում է տվել, որ սոցիալական ցանցի օգտատերեր իր հետ շփման ընթացքում առաջարկել են մերկ լուսանկարներ փոխանակել, այնուհետեւ դրանք չհրապարակելու դիմաց պահանջել են հաշվեհամարներին փոխանցել 150 հազար դրամ, ինչից հետո խզել են իր հետ կապը:

Անսթափ կինը ոստիկանությունում

Գիշերը ոստիկանության բաժնի մուտքի դուռը թակել է ալկոհոլի ազդեցության տակ գտնվող մի կին: Նա պահանջել է քննիչ՝ պատճառաբանելով, թե իր հեռախոսը վերցրել են: Ոստիկանության աշխատակիցները ցանկացել են ընդունել հաղորդում, սակայն կինը հրաժարվել է, փոխարենը հայհոյել է, աթոռով հարվածել է հերթապահ մասի պատուհանին, կոտրել ապակին, մտել հերթապահ մաս ու վնասել սեղանին դրված ծաղկամանները:

Կինը հրաժարվել է ներկայացնել իր անձնական տվյալները, ենթարկվել սթափության վիճակի զննության, հայհոյել է նաեւ հրավիրված բուժաշխատողների ներկայությամբ:

27-ամյա կնոջ ինքնությունը, բնականաբար, պարզվել է: Սթափվելուց հետո նա բաց է թողնվել:

Նուրբ ամուսինը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ բազուկոսկրի հոդախախտով բուժօգնության է դիմել 78-ամյա մի տղամարդ:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ վիճաբանության ժամանակ 58-ամյա կինն է քաշքշել ամուսնուն: Ընդամենը՝ քաշքշել է...

Հորանց

Ոստիկանություն զանգած 30-ամյա Արամը հայտնում էր, որ իր տնից իրերը գողացել-տարել են կնոջ հոր տուն:

Մեկնած ոստիկաններին նա հայտնել է, որ երկու օր առաջ կնոջ եղբայրն է տարել անկողնու ծածկոց եւ բաժակներ:

Ամփոփագրից նաեւ տեղեկանում ենք, որ այդ պահին Արամը գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ:

Զգիաղտները

Գեղարքունիքի մարզի Տրետուք գյուղի բնակիչ Արամայիս Հայրապետյանը ապրում է Երեւանում: Գյուղում տուն, հողամաս ունի, ամռան ամիսներին զբաղվում է այգեգործությամբ: Այս ամառ, սակայն, նրան տհաճ անակնկալ էր սպասում. հարեւանությամբ ապրող Գալստյանները՝ Մարինեն, Միերը եւ Սվետլանան, որոշեցին կտրել նրա այգու պտղատու ծառերը՝ ձմռան վառելիքն ապահովելու համար: Նաեւ քանդեցին տան հետնամասի պատը, տանիքի որոշ հատված եւ գողացան՝ ինչ ցանկացան: Վստահ էին, որ իրենց չեն կասկածի: Այնինչ եղավ հակառակը:

Երբ Արամայիսը գյուղ գնաց եւ տան պատն ու տանիքը քանդված տեսավ, իսկ այգու ծառերը՝ կտրված, դիմեց ոստիկանության Վարդենիսի բաժին:

Կատարվում է քննություն:

Գալստյանների պատմությունն այսքանով չի ավարտվում: Հոկտեմբերի 31-ին, դարձյալ ընտանյոք հանդերձ, հանգրվանեցին ոստիկանության Վարդենիսի բաժնում: Անհաշտ հարաբերությունների մեջ էին հարեւանությամբ ապրող Սիրանուշի ու նրա թոռան՝ Կարենի հետ: Կարենը մինչեւ խոր աշուն իրենց եղջերավորներին էր պահում սարում, իսկ տատը տանը մենակ էր լինում:

Հոկտեմբերի 31-ին տեսնելով տարեց կնոջը, փորձեցին վեճի բռնվել, սակայն նա մտավ դպրոց եւ ուսուցիչներից մեկին՝ Սուրեն Գեւորգյանին խնդրեց օգնել իրեն՝ ներկայացնելով իրավիճակը: Սուրենը դուրս գալով՝ փորձեց խոսել Գալստյանների հետ: Նրանք, սակայն, խոսելու ցանկություն չունեին: Սկսված վեճի ընթացքում էլ Միերը փայտով մի քանի անգամ խփեց Սուրենին: Այնուհետեւ քարերով ու փայտով հարվածեցին բակում կայանած Սուրենի մեքենային՝ կոտրելով կողային հայելին, լուսարձակները եւ դիմապակին:

Քրեական օրենսգրքի 117 եւ 185 հոդվածների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատանեկան սադիզմ

Բրիտանական մանկական հիմնադրամներից մեկի ուսումնասիրությունների համաձայն՝ Մեծ Բրիտանիայի չափահաս բնակչության շուրջ 20 տոկոսը հարձակումների կամ նվաստացման է ենթարկվում երիտասարդ խուլիգանների կողմից: Միլիոնավոր բրիտանացիներ ապրում են մշտական սարսափի մթնոլորտում, իսկ Միացյալ Թագավորության յուրաքանչյուր հինգերորդ քաղաքացի տուժել է խուլիգանների ոտնձգություններից:

Հետազոտության համաձայն՝ Մեծ Բրիտանիայի տղամարդկանց եւ կանանց 41 տոկոսը վախենում է անցնել փողոցում հավաքված երիտասարդների խմբերի կողքով, իսկ չափահաս բնակչության մոտ 20 տոկոսը մինչեւիսկ հրաժարվել է երեկոյան ժամերին մաքուր օդին զբոսնելու սովորույթից:

Մարդիկ վախենում են երիտասարդ խուլիգանների, փողոցներում թրեւ եկող անչափահասների խմբերի հարձակման կամ վիրավորանքների զոհ դառնալու հեռանկարից:

Մեծ Բրիտանիայի մեծահասակ բնակչության կազմում խուլիգանների գործողություններից տուժել են շատ ավելի մեծ թվով մարդիկ: Այսպես, 55-64 տարեկան բրիտանացիների մոտ մեկ քառորդը խոստովանել է, որ առնվազն մեկ անգամ ահաբեկման կամ հարձակման են ենթարկվել անչափահաս խուլիգանների կողմից:

Հետազոտություններին մասնակցած բրիտանացի կանանց կեսից ավելին հայտարարել է, որ վախենում է անցնել անչափահասների փողոցային խմբերի կողքով: Անվտանգության նույնպիսի միջոցի են դիմում նաեւ տղամարդկանցից շատերը:

Դարցումներին մասնակցել են Մեծ Բրիտանիայի երկու հազար քաղաքացիներ:

Հիշենք տարիներ առաջ Մեծ Բրիտանիայում կատարված երկու աղմկահարույց հանցագործություն, որոնց գլխավոր գործող անձինք անչափահասներ էին:

2007 թվականի նոյեմբերին մի խումբ հարբած անչափահասներ մահացու ծեծեցին մի բազմազավակ ընտանիքի հոր, որն ընդամենը համարձակվել էր նրանց դիտողություն անել: Անչափահասները տղամարդուն գազանաբար սպանել էին հենց նրա տան շեմին, կնոջ ու երեխաների աչքի առաջ: Խուլիգաններից մեկը այնպիսի դաժան ոգեւորությամբ էր ոտնահարել գետին տապալվածին, որ կոշիկը թռել էր ոտքից ու հետագայում հայտնաբերվել տղամարդու դիակի տակ:

Այուս համանման հանցագործությունը կատարվել է 2008 թվականի հունվարի վերջին: Ճիշտ է, այդ հանցագործությանը միայն անչափահասներ չէ, որ մասնակցել են: Երեք երեխաների հայր Դեվիդ Մարտինը սպանվել էր այն բանից հետո, երբ հայտնվել էր հարեւան բակում, որդու՝ այնտեղ ընկած գնդակը բերելու համար: Սպանության գործիք էին դարձել սամուրայական թուրը, դանակը եւ գոլֆի մականները:

Այս սպանությունը նույնպես կատարվել է Մարտինի ընտանիքի աչքի առաջ, իսկ հանցագործության ներբակալված մասնակիցների թվում կար մի տասնչորսամյա... աղջիկ:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 6-ից 13-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 47 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու, 1-ը՝ կողոպուտի, 5-ը՝ գողության, 2-ը՝ գողության եւ գողության փորձի, 1-ը՝ գողության փորձի, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ խարդախության, յուրացնելու կամ վատնելու եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացումը), 2-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու,1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ խուլիգանության եւ սուտ մատնության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանց ապօրինի իրացնելու եւ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության, 1-ը՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու պետական սահմանն ապօրինի հատելու փորձի համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 85 ճանապարհատրանսպորտային պատահար. 5 մարդ զոհվել է, 102-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 29 դեպք. 4 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Հանրապետության ճանապարհներին

Դեկտեմբերի 9-ին Երեւանի Սեբաստիայի եւ Ա. Վեգների փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Միցուբիշի» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ: «Նիսան»-ի երկու ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան մայրաքաղաքի Երեւանյան խճուղում բախվել է բետոնե արգելապատնեշին, այնուհետեւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենային եւ Երեւանյան խճուղում գտնվող կահույքի սրահի պատին. «ԲՄՎ»-ի վարորդն ու 10-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին «ՎԱԶ-21140» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Բաբաջանյան փողոցում վրաերթի է ենթարկել 41-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին Երեւանի Բաշինջաղյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել 10-ամյա երեխայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Արշակունյաց պողոտայում վրաերթի է ենթարկել 71-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին «ՎԱԶ-21015» մակնիշի ավտոմեքենան Հրազդանի Զորավար Անդրանիկի պողոտայում վրաերթի է ենթարկել 29-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին Մարմաշենի խճուղում իրար են բախվել «ՈՒԱԶ-3163» եւ «Լեքսուս GX» մակնիշի ավտոմեքենաներ: «Լեքսուս GX»-ի վարորդն ու չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 11-ին Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայում իրար են բախվել «ԿԻԱ», «Ֆոլքսվագեն», «Օպել», «Հոնդա» եւ երկու «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Հոնդա»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 11-ին «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենան, Երեւանի Դ. Բեկի փողոցում վրաերթի է ենթարկել 15-ամյա պատանու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 11-ին «Մերսեդես Ց 200» մակնիշի ավտոմեքենան Արտաշատ քաղաքի Ազատամարտիկների փողոցում վրաերթի է ենթարկել 37-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 11-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Եղվարդ-Երեւան ճանապարհի 5-րդ կմ-ին վրաերթի է ենթարկել 43-ամյա Տաթեւիկ Մանուկյանին, որը տեղում մահացել է:

■

Դեկտեմբերի 12-ին Մարգարա-Վանաձոր-Տաշիր ճանապարհի 53.5-կմ-ին իրար են բախվել երկու «ՎԱԶ-21214» մակնիշի ավտոմեքենաներ, որոնցից մեկի ուղեւորը մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 12-ին Երեւանի Թումանյան փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Ինֆինիտի» մակնիշի ավտոմեքենաներ: «Ինֆինիտի»-ի ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ռոք-կուռքն ընդդեմ կոռուպցիայի

Լեգենդար Rolling Stones խմբի ղեկավար Միք Ջագերը ծանրակշիռ ներդրում է ունեցել համաշխարհային ռոք երաժշտության զարգացման մեջ, սակայն ոչ ոք չէր ենթադրում, որ նա ժամանակին պայքարել է անգլիական ոստիկանությունում տիրող կոռուպցիայի դեմ:

Մեծ Բրիտանիայի պետական արխիվը հրապարակել է ռոքերի եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչների դատաքննության փաստաթղթերը:

1969 թվականին Միք Ջագերը ոստիկանությանը շորթման ու կաշառակերության մեղադրանք էր ներկայացրել: Նա պնդում էր, որ իր տուն են գցել մարիխուանայով ծրար, իսկ հետո առաջարկել են վճարել 1 միլիոն ֆունտ սթեռլինգ՝ իր թմրահակումների մասին տեղեկատվությունը չհրապարակելու դիմաց:

Ոստիկանությունն այդ մեղադրանքը ծիծաղելի համարեց: Օրենքի տեսանկյունից ռոք երաժիշտը վաղուց ընկալվում էր որպես հանցագործ, «հասարակության թերմացք» եւ «անուղղելի թմրամոլ»: Բանն այն է, որ 1968 թվականին Ջագերին արդեն դատել էին մարիխուանա պահելու համար: Ոստիկանությունը նույնիսկ հրաժարվեց լուրջ ընդունել Ջագերի այն ժամանակվա ընկերուհու՝ Մարին Ֆեյսֆուլի ցուցմունքները. նրան անհուսալի վկա էին համարում:

Դատավարությունն, այնուամենայնիվ, սկսվեց:

Ռոք կուռքը գլխավոր մեղադրանքները ներկայացրեց սերժանտ Ռոբին Կոնստեբլին, որը ոստիկանության սպաների հետ փորձել էր կաշառատվության դրդել իրեն: Սակայն երգիչը հրաժարվել էր փող տալ օրենքի պահապաններին:

Ավելի ուշ նա մարիխուանա պահելու համար տուգանվել էր 200 ֆունտ սթեռլինգով:

Գումարային վնաս կրելու համար Միք Ջագերը յուրահատուկ փոխհատուցում ստացավ նրանով, որ կարողացավ իրավապահ մարմիններում ներքին ծառայողական քննություն անցկացնելու որոշման հասնել:

Դարկ է նկատել, որ Լոնդոնի ոստիկանությանը մինչ այդ արդեն մեղադրել էին կաշառակերության համար: Իրավակարգի պահապանների այդ «թուլության» մասին 1969 թվականի նոյեմբերին գրել էր «Թայմս» թերթը: Հետեւաբար, կարելի էր սպասել, որ այդ նախադեպը կարող էր վստահություն հարուցել նույնիսկ այնպիսի ապահասարակական անձի հայտարարությունների հանդեպ, ինչպիսին Rolling Stones-ի ղեկավարն էր: Սակայն երգիչը դատը տանուլ տվեց...

Հետաքննությունը, որը վարում էր խուզարկու Ուիլյամ Ուիլսոնը, տեւեց երկու ամիս: Ուիլսոնը ոստիկանների մեղավորության հավաստի ապացույցներ չհայտնաբերեց: Իսկ հայցատուի վկաների ու հենց երգչի մասին հայտարարեց. «Մայքլ Ջագերը խելամիտ երիտասարդ է, սակայն, անկասկած, որպես թմրամոլ գտնվում է հասարակության լուսանցքում: Միսս Ֆեյսֆուլը բուժվել է հոգեկան հիվանդությունից, եւ հազիվ թե մենք կարող ենք վստահել այդ կնոջը: Իսկ Քրիստոֆ Գիբը (երգչի ընկերը, որը շուրջկալի ժամանակ Ջագերի տանն էր եղել), ինչ խոսք, ծնվել է հրաշալի ընտանիքում, սակայն նախկինում դատված է եղել գողության համար»:

Այսպիսով, իրավապահ մարմիններում տիրող կոռուպցիայի դեմ պայքարող այդ խումբը պարտված հեռացավ դատարանի դահլիճից:

Գլխավոր դատախազը համարեց, որ ռոք երգչի մեղադրանքներն անհիմն են ու փակեց գործը: Չնայած դրան, սերժանտ Կոնստեբլը, ում Ջագերը շորթման փորձի մեղադրանք էր ներկայացրել, հետագայում որպես անհուսալի աշխատակից ազատվեց զբաղեցրած պաշտոնից:

Սկիզբը՝ նախորդ համարում

Մոռացված դեմքեր. Կոստանդին Համբարձումյան



Թուրքերը նոր ուժեր կուտակելով եւ օգնության կանչելով քրդերին՝ մարտին լայնածավալ գործողություններ են սկսում հայերի դեմ: Հայկական զինուժը հերոսաբար պաշտպանվում է՝ հետ մղելով թշնամուն: Ինչպես միշտ, առաջնագծում էր Կոստանդին Համբարձումյանը՝ իր անձնական օրինակով ոգեւորելով զինվորներին ու սպաներին: Սակայն ուժերն անհավասար էին:

Որոշվում է մարտի 21-ին տարհանել Վասպուրականի բնակչությանը դեպի Արեւելյան Հայաստան, բայց քրդերը փակել էին Բերկրիի կիրճը, եւ այդ ճանապարհով հաջողվեց անցնել միայն վանեցիների փոքր մասին: Հիմնական զանգվածը՝ 10 հազարից ավելին, հայկական զինուժի պաշտպանությամբ նահաջեցին Պարսկաստան:

Մոտենալով Պարսկաստանի սահմանին՝Համբարձումյանը դիմում է իշխանություններին՝ խնդրելով թույլատրել վասպուրականցիների մուտքը երկիր: Երկու օր պատասխան չստանալով՝ հրամայում է անցնել սահմանը: Այդ ժամանակ Պարսկաստանում գործում էր անգլիացիների կողմից ֆինանսավորվող Ատրպատականյան հատուկ ջոկատը, որի հրամանատարն էր գնդապետ Կուզմինը: Զորամասը կազմված էր ասորական երեք եւ հայկական երկու գումարտակներից: Հայկական զինուժը միանում է ջոկատին, որպեսզի համատեղ ուժերով դիմագրավեն թուրքական կանոնավոր բանակին եւ քրդական ջոկատներին: Տեղի են ունենում մի շարք մարտական գործողություններ:

1918 թ. հունիսի 25-ին Ուրմիայի մոտ վայրէջք է կատարում անգլիական հետախուզական օդանավը: Օդաչուն հայտնում է, որ բրիտանական հրամանատարությունը պատրաստ է տրամադրել անհրաժեշտ զենք եւ զինամթերք, եթե հայ-ասորական ուժերը հավաքվեն Սային-Կալա բնակավայրի մոտ: Ինչպես պարզվեց հետագայում, անգլիացիները Պարսկաստանում ունեին մոտ 6 հազար զորք եւ կարիք ունեին համալրման, իսկ Ատրպատականյան ջոկատի զինվորների թիվը շուրջ 4 հազար էր, որոնք կարող էին լուրջ օժանդակություն լինել բրիտանացիների համար:

Թուրքական լայնածավալ հարձակումը հարկադրում է շտապ տարհանվել ոչ միայն վասպուրականցիներին, այլեւ Խոյ-Սալմաստ-Ուրմիա բնակավայրերի բնակչությանը: Փախստականների քարավանները ձգվում էին տասնյակ կիլոմետրեր, ինչը հնարավորություն չէր տալիս հայ-ասորական ուժերին արդյունավետ իրականացնել նրանց պաշտպանությունը:

Թուրքական հրետանին սարսափելի խուճապ է առաջացնում բնակչության շրջանում, զինվորներից շատերը թողնում են դիրքերը եւ սկսում փնտրել հարազատներին: Կոտանդին Համբարձումյանը իր օգնականների հետ, առանց կրքերը բորբոքելու, մտնում է բնակչության մեջ եւ զինվորներին համոզում վերադառնալ իրենց պարտականությունների կատարմանը՝ շեշտելով, որ այդպես ավելի օգտակար կլինեն իրենց հարազատներին: Զինվորները վերադառնում են իրենց դիրքերը:

Ահռելի աշխատանքի շնորհիվ հնարավոր է դառնում բնակչությանը հասցնել Սային-Կալա, որտեղ, իհարկե, ոչ մի անգլիացի չկար: Անգլիացիները հետագայում իրենց բացակայությունը պատճառաբանում են նրանով, որ գաղթականները նշանակված օրը չեն եկել, ինչը չէր համապատասխանում իրականությանը:

1918 թ. հուլիսի 24-ին տեղի է ունենում ողբերգություն: Կոստանդին Համբարձումյանը եւ իր ուղեկիցները պարսկական Մամաղջը գյուղի մերձակայքում հանդիպում են բրիտանական բանակի համազգեստով ծպտված թուրքական հետախուզական ջոկատին եւ, յուրայինների տեղ դնելով, մոտենում են նրանց...

Համբարձումյանը ծանր վիրավորվում է: Նրա վերջին խոսքերն էին. «Ժողովրդի նկատմամբ իմ պարտքը կատարեցի: Թող ձեզնից յուրաքանչյուրը նույնպես նրա նկատմամբ իր պարտքը կատարի: Չլքե՛ք ժողովրդին»:

Վալադ Վալադյանը (Մկրտիչ Վանցյան) հուշագրում է. «Կոստին կենդանութեան օրոք, ջերմօրէն փափաքում էր մեռնելու դէպքում թաղուել եթէ ոչ իր ծննդավայր Շուշիում, ապա գոնէ իր սիրած Այգեստանում: Բայց ճակատագիրը այլ կերպ տնօրինեց: Կոստին թաղվեց Ղարաբաղի լեռներից ու Այգեստանի պարտէզներից հեռու: Շուշեցի Կոստանդինը նուիրուել էր Վասպուրականի երկրին եւ այդ երկրի հայութիւնն էլ նրան սիրեց հարազատօրէն»:

Կոստանդին Համբարձումյանը կարողացավ փրկել Վասպուրականից եւ Հյուսիսային Պարսկաստանի գաղթած հայությանը: Գարեգին Նժդեհը մշտապես իր զինվորներին հիշեցնում էր խնկարկելի հերոսների մասին, որոնց թվում էր նաեւ շուշեցի Կոստանդին Համբարձումյանը:

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Համազգեստ չհարգողը

Սկիզբը՝ էջ 1

Ըստ մեղադրանքի՝ Արմեն Մ.-ն դուրս գալով ավտոտնակից եւ տեսնելով, որ Գարիկը Հայկին դանակով հարվածում է՝ հրել է Գարիկին, իսկ նա դանակով հարվածել է նաեւ Արմենի որովայնին:

Գարիկ Դալլաքյանին մեղադրանք էր առաջադրվել քրեական օրենսգրքի 104 եւ 112 հոդվածների 1-ին մասերով:

Գարիկ Դալլաքյանն իրեն մեղավոր է ճանաչել: Նախաքննական ցուցմունքում հայտնել է, թե դեպքի օրը ավտոտնակում օղի են խմել: Վարդանը եկել էր զինվորական համազգեստով, ինքն ասել է նրան. «Կարեւորը ֆորմա հագնելը չի, մարդս մարդ լինի»: Տղաներն իրեն դիտողություն են արել, իսկ Վարդանն ու Արթուրը հեռացել են: Հայկը առաջարկել է դուրս գալ խոսելու:

Դրսում խոսել են Վարդանին վիրավորելու մասին: Հայկն իրեն հայհոյել է: Ինքը զայրացել է, գրպանից հանել է դանակը ու մի քանի անգամ հարվածել Հայկին, նա գետնին է ընկել, ինքը էլի է հարվածել՝ չի հիշում՝ քանի անգամ: Ապա տեսել է մոտեցող Արմենին: Որպեսզի նա իրեն չմոտենա, դանակով մեկ անգամ էլ հարվածել է նրա որովայնին:

Գարիկ Դալլաքյանն ասել է, թե զղջում է կատարածի համար, խնդրել է իրեն ներել:

Դատարանում Գարիկն ասել է, թե Հայկն իրեն հարվածներ է հասցրել, ինքը պաշտպանվել է: Ինքը չի ցանկացել Հայկին սպանել, մութ էր, ինքը խփում էր, բայց չէր պատկերացնում, որ հարվածները դիպչում են նրան: Արմենին էլ խփել է «իներցիայի տակ»: Ինքը չէր ցանկանա, որ այսպիսի ավարտ լինի:

Տուժող Արմեն Մ.-ն հայտնել է, թե Գարիկն իրենց թաղի բնակիչ է, նույն թաղում են մեծացել: Հայկն էլ կողքի բակից էր, նա իր ընկերն էր: Դեպքից առաջ ինքը, Հայկն ու Վարդանը իրենց ավտոտնակում էին, երբ դուրս են եկել, տեսել են, որ տղաները հավաքված են հարեւան ավտոտնակում, իրենք էլ են գնացել: Վարդանը զինվորական համազգեստով էր, Գարիկը նրան տեսնելով՝ ասել է. «Ֆորմեն չեմ հարգում, ֆորմեն կռվող տղու համար կապ չունի», հետո նա հայհոյել է համազգեստ հագնողներին:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը հաշվի է առել, որ Գարիկ Դալլաքյանի խնամքին են երկու մանկահասակ երեխաները եւ թոշակառու, վատառողջ ծնողները:

Որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք՝ հաշվի է առնվել հանցավոր արարքներն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը:

Գարիկ Դալլաքյանը դատապարտվել է 15 տարի ազատազրկման:

Գոհար ՔԱԼԱԾՅԱՆ

«Կորամուծություն»

Խարդախը, որի «գործի» հետաքննությունը կատարել է ոստիկանության Գավառի բաժինը, յուրատեսակ սցենար կիրառեց: Ներկայանալով որպես կենցաղային իրերի միջնորդ առեւտրական՝ գնում էր մարդկանց հին ու անսարք տեխնիկան՝ փոխարենը տալով, ասենք, նոր արդուկ, հարիչ, վարսահարդար կամ այլ տեխնիկա, իհարկե՝ էժանագին ու անհայտ ֆիրմայի, որը, նրա պատկերավոր նկարագրությամբ, իր տեխնիկական բնութագրով գերազանցում էր տարածված ապրանքանիշերին, իսկ հայտնի չէր, քանի որ նոր էր հայտնվում շուկայում:

Հարց է առաջանում՝ այդ դեպքում ո՞րն էր նրա շահը, ի՞նչ պիտի աներ այդ հնոտին կամ անսարք տեխնիկան: Բանն այն է, որ սա խարդախման նախնական փուլն էր: Բուն փուլը հաջորդելու էր սրան, երբ նա վաճառվող տեխնիկայի միջից հանած պլաստիկ քարտը ներկայացնելու էր որպես բանկային քարտ եւ իր ցանցում հայտնվածին համոզիչ բացատրելու էր, որ նրա տրամադրած գումարը, այս դեպքում՝ 80 հազար դրամ, փոխանցելու է այդ քարտին եւ նա դրա դիմաց ցանկացած տեխնիկա ձեռք բերելու հնարավորություն է ստանալու:

Քարտը թողել էր տուժող կնոջը, նրա տված 80 հազար դրամը դրել իր գրպանը ու հեռացել՝ խոստանալով առաջիկայում կրկին այցելել ու մնացած տեխնիկան բերել: Կնոջ աչքը ջուր էր կտրել սպասելուց, իսկ երբ հասկացել էր, որ խաբված է, դիմել էր ոստիկանություն:

Խարդախը հայտնաբերվեց: Զղջաց կատարածի համար եւ տուժողին վերադարձրեց 80 հազար դրամը՝ շահելով նրա ներողամտությունը:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«Բենզինատները»

Ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները թմրամոլ-ինքնասպանների հերթական խումբը հայտնաբերեցին:

Հաղորդումը ոստիկանության Նոր Նորքի բաժին Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ստացվեց: Կեսգիշերն անց ոստիկանություն ահազանգած քաղաքացին հայտնում էր, որ հարեւան շենքի բնակարաններից մեկում մի խումբ մարդիկ բենզին են ներարկվում ու աղմկում, եւ դա առաջին դեպքը չէ:

Կարելի էր պատկերացնել, թե արդեն որերորդ անգամ էր կրկնվում գիշերային աղմուկը, եւ որքան են անհանգստացել մարդիկ իրենց հարեւանությամբ թմրամոլների որջի գոյությունից, որ որոշել են զանգել ոստիկանություն:

Դեպքի վայրը նախկինում երկու անգամ դատապարտված, 54-ամյա Խաչատուր Հովսեփյանի բնակարանն էր: Մեկնած օպերատիվ խումբը բնակարանում հայտնաբերեց թմրանյութով չորս ինքնաթունավորվածների՝ տանտիրոջն ու 24, 28 եւ 30 տարեկան երեք երիտասարդների: Խուզարկությամբ բնակարանում հայտնաբերվեց այն ամենը, ավելի ճիշտ՝ մնացորդներն այն ամենի, ինչից եւ ինչով կարելի էր պատրաստել «կոկորդիլոս» կոչվող թմրանյութը:

Այս թմրանյութի մասին բազմիցս ենք խոսել՝ հատկապես ընդգծելով, որ, ի տարբերություն այլ ծանր թմրամիջոցների, սա շատ ավելի արագ է օգտագործողին հասցնում գերեզման: Բժիշկների հավաստմամբ՝ պարբերաբար օգտագործումը թույլ է տալիս թմրամոլին ապրել ընդամենը մեկ-երկու տարի...

Հայտնաբերված կասկածելի բոլոր նյութերն ու պարագաները ուղարկվել են ոստիկանության փորձաքրեագիտական վարչություն՝ փորձաքննության: Տանտերը հայտարարել է, որ դրանք պատկանում են իրեն, իսկ դրսում՝ պատուհանի տակ հայտնաբերվածներն ինքն է նետել, երբ ոստիկանները մտնում էին բնակարան:

Բերման ենթարկված թմրամոլների քառյակը անհրաժեշտ գործողություններից հետո բաց է թողնվել ստորագրությամբ ու նաեւ խոստմամբ, որ կհրաժարվեն կործանարար ու հանցավոր մոլուցքից: Հավատարիմ կմնա՞ն խոստմանը, ցույց կտա ժամանակը:

Կատարվում է քննություն:

Դատա՞ռ, թե՞ պատրվակ

Հանցագործության հիմքում, ինչ խոսք, հաճախ նաեւ սոցիալական շարժառիթներ կան, բայց չենք կարող պնդել, որ մարդը հանցանք է գործում իր տունուտեղը պահելու համար: Գողության ճանապարհով ձեռք բերածը հանցագործը ծախսում է անձնական կարիքների վրա. այն դառնում է թմրամիջոց, ալկոհոլ, զվարճանք՝ ժամանցի վայրերում... Սոցիալական վիճակը որպես ինքնաարդարացման պատրվակ բերելը քրեական պատասխանատվությունից խուսափելու պատճառով է միայն:

Ծիրակի մարզի բնակիչ Սերոբ Կարապետյանը երեք անչափահաս երեխա ունի, ոչ մի տեղ չի աշխատում կամ չի ուզում աշխատել, որ հոգա ընտանիքի կարիքները: Փոխարենը, երբ հնարավորություն ընձեռվեց, գողացավ հարեւանի տնից: Մի քանի անգամ գիշերով կտրեց հանրապետությունից ժամանակավորապես բացակայող հարեւանի տուն պատուհանով անցնող ճամփան ու «տարհանեց» սպասք, հագուստ, մթերք, խմիչք: Գողոնն իրացրեց շուկայում, իսկ եկամուտը հիմնականում գիշերային ակումբներում զվարճանալու վրա ծախսեց:

Ոստիկանությունում 44-ամյա տղամարդն արարքն արդարացնելու համար նշում է սոցիալական ծանր վիճակը, որում ապրում է ընտանիքը՝ չկարողանալով հիշել դեպք, թե գողոնի վաճառքից գոյացած փողով երեխաների որ մի կարիքը հոգաց: Չէ, հիշեց երկու դեպք, երբ երշիկ ու միս էր գնել տան համար, կոշիկ՝ կրտսեր որդու համար: Նաեւ գողացած սպասքից մի երկու կտոր տուն էր տարել...

Հարեւանի տուն երեք-չորս անգամ մտավ: Առաջինը տանտիրուհու թանկանոց մուշտակն արժանացավ ուշադրությանը: Հիսուն հազար դրամով վաճառեց շուկայում ու ընկերոջը հրավիրեց գիշերային ակումբ:

Հարեւանին պատճառած ընդհանուր վնասը երեք հարյուր հազար դրամի էր: Հարեւանը բողոքը չի պնդել, բայց Սերոբ Կարապետյանի արարքը քրեական օրենսգրքում որակում ունի՝ 177 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ՝ գողություն, որը կատարվել է խոշոր չափերով, իսկ պատիժը երկուսից վեց տարի ժամկետով ազատազրկումն է: Այնպես որ, Սերոբ Կարապետյանը դեռ անելիք ունի նախաքննական մարմնում ու դատարանում:

Գողության փաստով նախաքննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողացել էր հեռախոս

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները Կոմիտասի պողոտայից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանություն բերման ենթարկեցին 1988 թվականին ծնված Գոռ Պողոսյանին:

Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց բջջային հեռախոս: Պարզվեց, որ նույն օրը թիվ 259 երթուղու ավտոբուսի սրահում Գոռ Պողոսյանն այդ հեռախոսը գողացել էր մի կնոջից՝ պատճառելով 180 հազար դրամի վնաս:

Տուժող կինը հրաժարվել է հաղորդում տալուց:

Գոռ Պողոսյանը ստորագրությամբ բաց է թողնվել:

Նախապատրաստվում են նյութեր:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գողություն սուպերմարկետում

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից Ապարանի բաժին հաղորդում էր ստացվել, որ իրենց է զանգահարել Կարինե Ա.-ն եւ հայտնել, որ Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի սուպերմարկետում կորցրել է դրամապանակը, որի մեջ եղել է 157 հազար դրամ:

Ձեռնարկված միջոցառումներն արդյունք տվեցին օրեր անց: Պարզվեց, որ կնոջ դրամապանակը սուպերմարկետի զուգարանից գողացել է 1988 թ. ծնված Սեդա Հ.-ն:

Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում՝ Սեդա Հ.-ն ներկայացավ ոստիկանության Ապարանի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Կանխարգելիչ միջոցառում ամփոփվեց

Ոստիկանության հիմնական գործառույթներից է՝ կանխել, նախականխել ու բացահայտել հանցագործությունները: Կանխարգելիչ աշխատանքն, ինչ խոսք, չափազանց կարեւոր է: Այդ ուղղությամբ ոստիկանությունը ամեն տարի իրականացնում է հատուկ ծառայություն՝ այդ թվում՝ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումներ, որոնցից մեկն էլ «Զինանոց»-ն է:

Տարին երկու անգամ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունը կազմակերպում եւ անցկացնում է «Զինանոց» համալիր կանխարգելիչ միջոցառումը, որի ընթացքում ոստիկանության ծառայողները բնակչության շրջանում անցկացնում են ծավալուն բացատրական աշխատանք՝ ապօրինի պահվող զինամթերքը կամավոր հանձնելու ուղղությամբ:

Ոստիկանությունը խիստ կարեւորում է ապօրինի զենք-զինամթերքի հայտնաբերումը, այդ իսկ պատճառով համալիր կանխարգելիչ միջոցառումը տարվա մեջ, մեկական ամսով, անցկացվում է երկու անգամ:

Ներկայացնենք «Զինանոց-2018»-ի երկրորդ փուլի արդյունքները:

Միջոցառման երկրորդ փուլն անցկացվել է հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 22-ը: Միջոցառման ընթացքում ոստիկանության տարածքային ստորաբաժանումների կողմից հայտնաբերվել, առգրավվել կամ կամավոր հանձնվել է 75 միավոր հրազեն եւ 3 միավոր գազային ատրճանակ:

Կամավոր հանձնած զենքերի հիմնական մասն օգտագործվել է Արցախյան ազատամարտում: Այդ զենքերից շատերը պատերազմի մասնակիցները, նրանց բարեկամներն ու ընտանիքի անդամները հայտնաբերում են պատահաբար՝ տանը կամ օժանդակ շինություններում ինչ-ինչ աշխատանք կատարելիս: Այսինքն՝ հաճախ դրանց գոյության մասին մոռացված է լինում:

«Զինանոց» համալիր կանխարգելիչ միջոցառման երկու փուլերի ընթացքում կամավոր հանձնվել է 156 միավոր հրազեն եւ 4 միավոր գազային ատրճանակ:

Ընդհանրապես, ապօրինի զենք-զինամթերք հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանությունն աշխատում է ամեն օր: Միայն այս տարվա տասը ամիսների ընթացքում հայտնաբերվել, առգրավվել կամ կամավոր հանձնվել է 454 միավոր հրազեն, այդ թվում՝ ատրճանակներ, ինքնաձիգներ, կրակող սարքեր, հրացաններ, նռնականետ, գնդացիրներ, գազային ատրճանակներ, տարբեր տրամաչափի փամփուշտներ, նռնակներ, պայթուցիկ նյութ եւ այլն:

Կրկին հիշեցնենք՝ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ապօրինի զենք-զինամթերքը կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Զախողված գողություն

Դեկտեմբերի 2-ի առավոտյան ոստիկանության Անիի բաժնում Քարաբերդ գյուղի մի բնակիչ հաղորդում տվեց. գիշերը կոտրել էին նրա անասնագոմի փականն ու հափշտակել հինգ գլուխ հորթ, որոնցից մեկը հետո գտնվել էր անասնագոմից ոչ հեռու:

Գյուղացուն պատճառած վնասի չափը մոտ 600.000 դրամի էր:

Ոստիկանության ծառայողները սկսեցին որոնողական աշխատանքներ իրականացնել:

Հաղորդումից ժամեր անց Քարաբերդ գյուղի դաշտերում քրեական հետախույզները նկատեցին «ԳԱԶԵԼ» մակնիշի մեքենա: Վարորդը չկար, իսկ մեքենայում գողացված հորթերն էին...

«ԳԱԶԵԼ»-ի անիվները թաղվել էին ցեխի մեջ, ծախողել գործը: Ցեխով քողարկված էին նաեւ համարանիշերը, իսկ թե ումն էր «ԳԱԶԵԼ»-ը, դեռ հարկավոր էր պարզել:

Այդ առավոտ գողության մի հաղորդում էլ ոստիկանության Մուշի բաժնում էր ստացվել: Գյումրեցի կինը հայտնել էր, որ գիշերը իրենց տան դիմացից գողացել են փեսայի մեքենան: Տարօրինակ զուգադիպությամբ՝ «ԳԱԶԵԼ» մակնիշի էր:

Կողմնորոշումը ստանալուն պես ոստիկանների համար պարզ էր, որ խոսքը նույն մեքենայի մասին է: Առաջին հայացքից թվում էր՝ անասնագողերը նախ հափշտակել էին մեքենան, հետո արդեն՝ հորթերը: Բայց այդպես չէր:

Ոստիկանները նույն օրը «ԳԱԶԵԼ»-ի տիրոջը՝ Գյումրիի բնակիչ Հովհաննես Մանուկյանին, հայտնաբերեցին Մարալիկ քաղաքում, եւ, գողության կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Անիի բաժին:

Ինչո՞ւ էր մեքենան Մարալիկում փնտրում, ինչո՞ւ ինքը չէր ոստիկանություն ահազանգել, այլ խնդրել էր զոքանչին, ու էլի շատ հարցեր, որոնց պատասխանները չգտնելով՝ Հովհաննես Մանուկյանը խոստովանեց: Ինքն էր հորթերը գողացել, իսկ գործը ծախողելուց հետո, որպեսզի ոստիկաներին շեղի, հարազատներին խնդրել էր ոստիկանություն զանգել:

Գողոնը վերադարձվել է տիրոջը:

Փաստի առթիվ կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Ոստմնապանը

Հովհաննես Հարությունյանը ութ-ինը տարի չէր առնչվել ոստիկանների հետ, մինչդեռ նախկինում բավական «ներկայանալի» ճանապարհ էր անցել. չորս դատվածություն՝ երկու գողություն, երկու կողոպուտ: Մինչեւ վերջ կրել էր պատիժները, իսկ երբ վերադարձել էր տուն, որոշում էր կայացրել՝ այլեւս չվերադառնալ հնին:

Ութ-ինը տարի պահեց խոստումը: Սկզբնական շրջանում արտագնա աշխատանքի մեկնեց Ռուսաստան, հետո որոշեց աշխատելու համար հեռուներ չգնալ. մայրաքաղաքում թափ առած ծավալուն շինարարությունը աշխատանքային ճակատ էր սպեղծել, եւ Հովհաննեսն անցավ բանվորական աշխատանքի:

Գոհ էին տնեցիները, գոհ էր նաեւ ինքը: Բայց հուլիսի վերջերին միտքը կրկին ծռվեց: Միտքը ծռողին հենց ճամփին էլ գտավ, երբ մի օր գործով Արմավիր գնաց: Իջավ մեքենայից ու ցանկալին երկար չփնտրեց: Փարթամ աճած կանեփի բույսերից առատ բերք հավաքեց ու տուն վերադառնալուց հետո չորացրեց, մանրացրեց, ու թմրանյութը պատրաստ էր:

Պաշարը բավականաչափ էր. մի երկու չափաբաժին դրեց կոշիկի մեջ՝ օրվա ընթացքում «վայելելու» համար, իսկ մեծ մասը պահեց ապահով թաքստոցում՝ պատի մեջ:

Քանի որ առատ պաշարը բնությունից անվճար էր հասել իրեն, ինքն էլ առատաձեռն եղավ գործընկերների նկատմամբ: Մեկ-մեկ «հյուրասիրում» ու շնորհակալության էր արժանանում:

Երկու-երեք ամիս տեւեցին Հովհաննեսի «վայելքները»: Իրացնելով օպերատիվ տվյալները՝ ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով, նրան բերման ենթարկեցին:

Հովհաննեսն առանց այլեւայլության կատարեց ոստիկանների՝ թմրանյութը ներկայացնելու պահանջը՝ գաղտնազերծելով թաքստոցը. կոշիկի միջից հանեց պոլիէթիլենի մեջ փաթաթած թմրամիջոցը: Հետո գաղտնազերծեց նաեւ մյուս պահեստ-գաղտնարանը:

Պարզվեց՝ Հովհաննես Հարությունյանի «հոգին խորն էր». նաեւ փամփուշտներ ու փամփշտակալ էր պահում տանը, որոնք նույնպես ներկայացրեց ոստիկաններին: Իսկ թե ինչ նպատակով էր պահում ապօրինի զինամթերքը, պատասխան չուներ:

Փաստով հարուցված քրեական գործով քննություն է կատարվում:

Համլիկ ՊՈԴՈՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում դեկտեմբերի 7-ին սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 1986 թ. ծնված Համբարձում Չ.-ն, որը 2010 թ. ապրիլից ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողները դեկտեմբերի 7-ին Ազատամուտ գյուղում հայտնաբերել եւ ոստիկանության բաժին են ներկայացել 1970 թ. ծնված Արտեմ Ս.-ին, որը 2014 թ. մայիսից ՌԴ Մոսկվայի մարզի Ուֆսին շրջանի ՆԳԲ կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 264 հոդվածի 3-րդ մասի (ճՏՊ մահվան ելքով) մեղադրանքով:

◆

Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, դեկտեմբերի 7-ին Երեւան քաղաքի Տիգրան Մեծի պողոտայից բերման են ենթարկել Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 313-1, 313-7 եւ 313-8 հոդվածների (խարդախություն) հատկանիշներով միջազգային հետախուզման մեջ գտնվող 1962 թ. ծնված Վիլիկ Շ.-ին:

◆

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ՔՀԲ ծառայողների ձեռնարկած աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 7-ին Կիեւ-Երեւան չվերթով ինքնակամ ՀՀ է ժամանել եւ «Զվարթնոց» օդանավակայանից Կենտրոնական բաժին է տեղափոխվել 1983 թ. ծնված Կառլեն Խ.-ն, որը 2015 թ. դեկտեմբերից ոստիկանության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության ՔՀ գլխավոր վարչության եւ Կապանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 7-ին Երեւանի Հերացու եւ Չարենցի փողոցների խաչմերուկից բերման է ենթարկվել 1977 թ. ծնված Հրաչիկ Խ.-ն, որը ոստիկանության Կապանի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 34-177 (գողության հանցափորձ) եւ 177 (գողությունը) հոդվածների մեղադրանքով պատժի կրումից խուսափելու համար:

◆

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում դեկտեմբերի 7-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման են ենթարկել Համբարձում Չ-ին, որը 2010 թ. ապրիլից ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

◆

«Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 11-ին Թբիլիսի-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից բերման է ենթարկվել Վրաստանի քաղաքացի Գրիգորի Ա.-ն, որը ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 325 եւ 329 հոդվածների մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հնդկական էպոս
Քիմ. տարր / Հայկ. տոմարի ամիս
...ը փրկեցին Հռոմը / «Ոսկե գնդակ»-93
Թռչնի, կենդանու ծուտ
Ճարտ. կորագիծ կառուցվածք
Պարսից արքա / Տիրուհի
Ուղտայծ / Մաժոր, մինոր
Հավաքական / Թագավոր
Սմիսլով, Պետրոսյան
Եռանկ. ֆունկցիա
Կոկորդիլոս / «Գայլը եւ յոթ ...ները»
Մոլդավ. երգահան
Մաթեմ. գործողություն
Լիտվ. բանաստեղծուհի
Պակիստանցի ֆիզիկոս
Պորտուգալ. նավագնաց
Փոքր խրճիթ / Կաթնամթերք
Իտալացի նկարիչ / Ռոբերտ դե ...
... Դոլուխանյան
Քարաժայռ
Ֆրանս. մաթեմատիկոս
«Գեւորգ Մարզպետունի»
Գետ, Ասիա / Նոտա
Մոնղոլ. հին մ/քաղաքը / Լսարան
Սարգիս ... / Լեռնանցք
Վիետնամի մանրադրամ
Իսպան. էպոսի հերոս / Հայ կին գրող
Մսով կերակուր / Զամբիա
Քաղաք, Պակիստան
Անգլ. լորդ, փիլիսոփա / Մեհյան
Հրահեղուկ զանգված
Մեջքի ելունդ
Արխիվ
Բարձունք
Ֆրանսիացի երգահան / Փասիան
Սագա
Կողով
Ստորակարգ բույս
Հում կաթի սեր / Ադեն
Թագոր, վեպ / Չինվ. համազգեստ
Վահան ...
Սենդի կետ / Ըմբշամարտ
Ռուսական օպերա
Պնակ / Թշնամի
Կարճ նիզակ
Հայկական ֆուտ. թիմ
... Սիբելիուս
Հացահատիկ / Միրգ
Ներկատուբույս / Ուժեղ քամի (Միջերկր. ծ.)
Մարկ ... / Համաստեղություն
«Նավապետ ...ի ոդիսականը»
... Ռեմո
Շամամ / Ջրային տարածք
... ուսուցում
Դանայան ...
...ի նշան / ... Երկաթ
Մշակվում է կենդանու մորթուց
Յամբ, անապեստ / Առեւտրի վայր
Գրչի, մատիտի քաշած խազ
Փարախ
Վառելափայտ
ԽՍՀՄ տիեզերագնաց
Մեծ / Կրոն. կազմակերպութ.
Համեմունք
Ժամանակի միավոր
Ռուս զորավար / Արեւելյան շաշկի
Հնդիկ պարուհի
Վարս
Ճապոն. քաղաք
Մխիթար ... / Մակաբույծ միջատ
Որոմ, գայլուկ
Վիշապ / Ճնշման միավոր

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

Խոյ - Եթե ձեր կյանքում կան բաներ, որոնք ձեզ չեն գոհացնում, ապա ժամանակն է ամեն ինչ փոխել: Բացառություն են սիրային հարցերը:

Ցուլ - Էքստրիմի սիրահար եք, բայց այս փուլում փորձեք զերծ մնալ վտանգավոր գործելաոճից:

Երկվորյակ - Կհայտնվեք երկընտրանքի առաջ: Փորձեք այս շրջանում ձեզ հանգիստ պահել, քայլ անելու համար վաղ է:

Խեցգետին - Եթե հայտնվի մեկը, ում կհամակրեք, մի նվիրվեք միանգամից. մարդիկ միշտ չէ, որ այն են, ինչ ցույց են տալիս:

Առյուծ - Թղթաբանության հետ կապված չլուծված հարցեր ունեք, որոնք լուծում կստանան:

Կույս - Երազանքներով եք ապրում, իսկ եթե դրանք չեն իրականանում, ընկճվում եք: Իրական բաներ պլանավորեք:

Կշեռք - Փորձեք ձեզ տրամադրել ընկերներին եւ հարազատներին. այդ բացը լրացնելու ժամանակն է:

Կարիճ - Սիրում եք պահի տակ որոշումներ կայացնել, բայց փորձեք փոխվել. լավ մտածեք, հետո գործեք:

Աղեղնավոր - Գործնական առաջարկ կստանաք, որը ձեզ կոգեւորի եւ առաջ կմղի:

Այծեղջյուր - Չեն բացառվում անակնկալ իրավիճակները: Փորձեք համբերատար լինել:

Ջրհոս - Եթե կյանքին դրական կողմից նայեք, ապա բացասական էմոցիաները կփոխվեն շատ դրականի:

Ձուկ - Շրջապատը ձեզ կփորձի հուսից հանել, բայց եթե համբերատար լինեք, կհաղթեք:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.f2-e3 h2:d2 2.e1:g7 x

Խնդիր N2 1. a7-b8 d8:d4 2.d6-e7 f8:d6 3. b8:a1 x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 13.12.2018 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 7170:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: